Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑ

Ուսումնական մոդուլ

Ուսումնական մոդուլը մշակվել է «Քայլ դեպի արդար Հայաստան» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացնում է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկերներ «Աստղացոլք» ՀԿ-ի, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի, «Ընտանիք և համայնք» ՀԿ-ի հետ համատեղ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Ուսումնական մոդուլ

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ. գործառույթներ, նպատակներ, խնդիրներ

Բովանդակություն

Մաս I: Պրոբացիայիէությունը 3

Ինչո՞ւՊրոբացիա 4

Ի՞նչէՊրոբացիան 4

Մաս II.ՊրոբացիանՀայաստոնում 6

Ընդհանուրտեղեկություններ 6

Պրոբացիայիպետականծառայությանկառուցվածքը 7

Հիմնականիրավականակտերը 8

Պրոբացիայինպատակներնեն՝ 9

Պրոբացիանքրեականարդարադատությանհամակարգում 11

Ռիսկերիևկարիկներիգնահատտում 14

Պրոբացիայիշահառուիանձնականգործևպատժիկատարմանանհատականծրագիր 18

Անձնականգործիվարում, ձեվաթղթեր 22

ՀՀ-ումպրոբացիայիծառայությանխնդիրներինկարագրություն 25

Մաս III. Վաղաժամկետազատում 28

Մաս IV. «Աջակցությունպրոբացիային» ազգայինցանցիկողմիցիրականացվողմոնիթորինգիգործիքներ 31

Նախաբան

Այս ուսումնական մոդուլը տրամադրում է՝

· Նախաբան Պրոբացիայի ծառայության գործունեության մասին;
· Ուսումնասիրության ընթացքում վերհանված խնդիրները, որոնց բախվում է Պրոբացիայի պետական ծառայությունը;
· Մոնիթորինգի գործիքներ, որոնք կօգնեն «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի անդամ կազմակերպություններին իրականացնել Պրոբացիայի ծառայության մոնիթորինգ։

Այս ուսումնական մոդուլը պատրաստվել է «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի մոնիթորինգ իրականացնող թիմերին աջակցելու համար։ Թիմերը կկազմվեն «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներից։

Բովանդակության տեսանկյունից, մոդուլն ունի առավել լայն կիրառություն, այնուամենայնիվ, ներկայացվող տեղեկատվությունը և գործիքները կարող են օգտագործվել հասկանալու համար Հայաստանում Պրոբացիայի ծառայության կողմից իրականացնող հիմնական գործառույթները։

Մաս I: Պրոբացիայի էությունը

Ինչու՞ պրոբացիա

Հայաստանում գերծանրաբեռնված քրեակատարողական հիմնարկները բեռնաթափելու ամենահեշտ ձևերից մեկը պրոբացիայի և վաղաժամկետ ազատման համակարգի ներդրումն է։ Պրոբացիան մասնավորապես օգտակար է այն իրավախախտների համար, ովքեր դեռևս քրեական ենթամշակույթի ներկայացուցիչ չեն և հանցագործ կենսակերպ չեն վարում։ Շատ հաճախ ՔԿՀ-ում առաջին անգամ հայտնված անձինք այս կամ այլ կերպ առնչվում են արդեն ամրապնդված հանցագործների հետ։Բանտի միջավայրը վերջիններիս միայն վնասում է և մեծացնում կրկնահանցագործության հավանականությունը։ Հանցանքի կատարման պահից իրավախախտի հետ աշխատանքը առաջնային է դառնում, և արդեն

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

հարկավոր է մշակել գործողությունների ծրագիր, որը կկանխի իրավախախտի կողմից երկրորդ հնարավոր իրավախախտումը, ոչ թե միայն կնշանակվի պատիժ, որից նա պետք է տանջվի:

Նման մոտեցումն օգտակար է ոչ միայն իրավախախտի այլև ամբողջ հասարակության համար: Ազատազրկումն այսօր ընդունված է դիտարկել, որպես ներդրում առաջին անգամ հանցանք գործած մարդու հետագայում կրկնահանցագործ դառնալու գործում, իսկ որոշ դեպքերում նույնիս հանցագործի կենսակերպն ընտրելու մեջ: Պրոբացիայի մեթոդների մեծագույն առավելությունն այն է, որ այն հնարավորություն է տալիս այսպես կոչված «հում» իրավախախտներն (առաջին անգամ հանցաք գործած մարդկանց) հեռու պահել քրեակատարողական հիմնարկներում առկա քրեական ենթամշակույթի «արժեքներից»:

Ինչո՞ւ Պրոբացիա

Հայտնի է, որ քրեակատարողական հիմնարկում գտնվելն առաջին անգամ հանցագործություն կատարած անձանց ավելի շատ կարող է վնասել, քան որևէ դրական ազդեցություն ունենալ: Հանցագործության դեպքում առաջնային կարևորություն է ստանում աշխատանքն իրավախախտում կատարած անձի հետ, քանի որ ավելի արդյունավետ է ոչ թե իրավախախտին «ուղղակի» պատժելը, այլ կրկնահանցագործության կանխելը: Այս մոտեցումն ելնում է ոչ միայն իրավախախտի, այլև ամբողջ հասարակության շահերից:

Ի՞նչ է Պրոբացիան

«Պրոբացիա եզրույթն առաջացել է լատիներեն <probare> բառից և նշանակում է փորձել: Իրավաբանության մեջ պրոբացիան այլընտրանք է ազատազրկմանը, յուրատեսակ փորձաշրջան, հատկապես թեթև իրավախախտում կատարած անձանց համար: Ըստ էության դատարանի վճռով նրանց հնարավորություն է տրվում սահմանափակ ազատության մեջ, որոշակի վերահսկողության պայմաններում կրել պատիժը կամ խափանման միջոցը:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Պրոբացիաներկու մասից բաղկացած գործողություն է, որոնք են՝ վերահսկողություն և աջակցություն: Պրոբացիայի ծառայության նպատակն է ապահովել համայնքների ապահովությունը և շահառուներին տրամադրել վերականգնող գործիքների, որոնք վերջիններիս հարկավոր են ապահով և օրինապաշտ կենսակերպ վարելու համար: Պրոբացիան նշանակվում է դատարանի կողմից, երբ դատավորը որոշում է, որ այն համապատասխան սանկցիա է մասնավորապես այդ կոնկրետ իրավախախտման և իրավախախտի համար: Իրավախախտին թույլատրվում է մնալ համայնքում՝ Պրոբացիայի ծառայողի վերահսկողության ներքո:

Պրոբացիան իրավախախտի համար հնարավորություն է դատարանի սահմանած պայմաններում և պրոբացիայի ծառայողի վերահսկողության ներքո, կյանքի նորմալ պայմաններում ապրել շարունակելով, հարմարվելու և վերահաստատվելու հասարակությունում՝ որպես համայնքի առողջ անդամ: Գործընթացը պատժող չէ, սակայն դատարանի կողմից որոշված պայմանների խախտման դեպքում իրավական պատժամիջոցները միշտ ենթադրվում են:ԿԱրևոր է հասկանալ, որ պրոբացիան միայն քրեական պատասխանատվության վերացում կամ մեղմացում չէ: Եթե շահառուն չի համագործակցում իրեն կցված պրոբացիայի ծառայողի հետ, կամ եթե նա պրոբացիայում գտնվելու ընթացքում մեկ այլ իրավախախտում է կատարում, ընտրված պատժի ձևը փոխարինվում է ազատազրկմամբ:

Պրոբացիայի կարևոր առանձնահատկություններից և սկզբունքներից մեկն այն է, որ հնարավոր է դարձնում պատժի և հարկադրանքի այլ միջոցների կիրառումը զուգակցել անձի ուղղմանն ու վերասոցիալականացմանն ուղղված միջոցների հետ:

Պրոբացիան վերահսկողության և աջակցության համադրությունն է:
Պրոբացիայի գործառույթները ներառում են.
1. վերահսկողություն,
2. համայնքում վերաինտեգրման պլանավորում,
3. դատարանի պահանջով զեկույցների պատրաստում:

Կախված նրանից, թե որ փուլում է կիրառվում պրոբացիան, այն նպատակ ունի. ապահովել այլընտրանքային խափանման միջոցների կատարումը, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և դատարանի կիրառած հարկադրանքի այլ

միջոցների կատարումը՝ անհատական պլանավորման միջոցով և գնահատելով ռիսկերն ու հաշվի առնելով պրոբացիայի շահառուի պահանջմունքները: Հետպատժյա փուլում պրոբացիայի կիրառման խնդիրն է պրոբացիայի շահառուի մասին պատրաստել անհատական խորհրդատվական զեկույց՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու նպատակով: Իսկ այն դեպքում, երբ անձը գտնվում է պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման փորձաշրջանի մեջ, կամ պատժի կրումը հետաձգված է, պրոբացիան իրականացնում է վերահսկողություն այդ անձի նկատմամբ:

Մաս II Պրոբացիան Հայաստանում

Ընդհանուր տեղեկություններ

- 2015-2016թթ. Ստեղծվել են պիլոտային գրասենյակներ Վանաձորում և Շենգավիթում
- 2016. Պրոբացիայի մասին օրենքի ընդունում, ուժի մեջ է մտել 04.06.2016թ.
- Գործում է 2016թ. սեպտեմբերի 1-ից՝ ԱՊԿԲ հենքի վրա՝ որպես ՀՀ ԱՆ առանձնացված ստորաբաժանում
- Քաղաքացիական ծառայություն է
- Ունի տարածքային ստորաբաժանումներ
- Աշխատում է մոտ 3000 շահառուների հետ

Նախքան Հայաստանում Պրոբացիայի պետական ծառայության (ՊՊԾ) ստեղծումը դատապարտյալների նկատմամբ վերահասկողությունն իրականացնում էր Արդարադաության նախարարության Քրեակատարողական վարչության Այլընտրանքային պատիժների կատարման բաժինը, որի հենքի վրա հետագայում ստեղծվել է ՊՊԾ-ն, սակայն այն իր առջև չէր դնում դատապարտյալի վերականգնման/վերասոցիալականացման խնդիր: 2016թ. մայիսին ընդունված և 2016թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտած "Պրոբացիայի մասին" օրենքի 4-րդ հոդվածի

համաձայն՝ Պրոբացիայի ծառայության նպատակներն են քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովելու միջոցով, հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով, պրոբացիայի շահառուին և տուժողին (տուժողի իրավահաջորդին) հաշտեցնելը, քրեական արդարադատության իրականացման աջակցությունը: Ինչպես տեսնում ենք հայտարարված նպատակներից, փորձ է կատարվում անցնել պատժիչ արդարադատությունից վերականգնողականի: Հարկ է ընդգծել, որ Հայաստանում Պրոբացիայի ծառայության հիմնական սկզբունքներից մեկը հարկադրանքի համադրումն է իրավախախտի վերասոցիալականացմանն ուղղված քայլերի հետ:

Պրոբացիայի պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության առանձնացված ստորաբաժանում է: Ծառայությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է ՀՀ կառավարությունը:

Պրոբացիայի պետական ծառայության կառուցվածքը

Պրոբացիայի պետական ծառայության կառուցվածքը հետևյալն է՝

1. Կենտրոնական մարմին,
2. Երևանի քաղաքային մարմին,
3. Մարզային մարմիններ:

Մարզային մարմինները տեղակայված են ՀՀ բոլոր 10 մարզերում:

Ծառայության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Արշակունյաց 63:



Հիմնական իրավական ակտերը

Հիմնական իրավական ակտերը, որոնցով ղեկավարվում է Ծառայությունը՝

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն,
- «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունված 2016թ. մայիսի 17ին)
- ՀՀ Քրեական օրենսգիրք
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՀՀ քրեակատարողական օրենսգիրք
- Կանոնադրություն և կառուցվածք (հաստատված ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 14-ի N 742-Ն որոշմամբ)

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կարգավորում է պրոբացիայի նպատակները, խնդիրները, սկզբունքները, կազմակերպման և գործունեության հիմունքները, այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջան նշանակելու, պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացման և խորհրդատվական զեկույցի տրամադրման կարգի, պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ իրականացվող պրոբացիայի առանձնահատկությունների, ինչպես նաև պրոբացիայի ծառայության գործունեության հետ կապված հարաբերությունները:

Պրոբացիայի ծառայության լիազորությունները

- Ապահովում է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը.
- Ապահովում է այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.
- Ապահովում է քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարումը.
- Տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ խորհրդատվական զեկույցներ.
- Տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ խորհրդատվական զեկույցներ.
- Վերահսկողություն է իրականացնում պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ.
- Իրականացնում է հաշտարարություն.
- Իրականացնում է վերասոցիալականացման միջոցառումներ.

Պրոբացիայի նպատակներն են՝

- քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովելու միջոցով.
- հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ նաև նրա ֆիզիկական և հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրա դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը.
- հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով.
- պրոբացիայի շահառուին և տուժողին (տուժողի իրավահաջորդին) հաշտեցնելը.
- քրեական արդարադատության իրականացման աջակցությունը:

Պրոբացիայի խնդիրներն են՝

- քրեական վարույթի ընթացքում Պրոբացիայի մասին օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.
- ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և դատարանի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կատարումը.
- ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և այլընտրանքային խափանման միջոցների կատարման անհատական պլանավորման իրականացումը՝ գնահատելով ռիսկերը և հաշվի առնելով պրոբացիայի շահառուի կարիքները.
- պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու վերաբերյալ պրոբացիայի շահառուի մասին խորհրդատվական զեկույցների տրամադրումը.
- պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի

մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացումը.

- պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) միջև հաշտարարության իրականացումը:

Պրոբացիայի շահառու

- անձ, որի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց, կամ
- նշանակվել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ կամ անվտանգության միջոց, կամ
- նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ նրան պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում նշանակվել է փորձաշրջան, կամ
- նա պատիժը կրելուց ազատվել է, կամ
- նրա պատժի կրումը հետաձգվել է, կամ
- որը մասնակցում է հաշտարարության գործընթացի (բացառությամբ տուժողի և տուժողի իրավահաջորդի), կամ
- որի վերաբերյալ պետք է ներկայացվի խորհրդատվական զեկույց.

Պրոբացիան քրեական արդարադատության համակարգում

Ծառայությունն ունի իր դերակատարումը քրեական դատավարության տարբեր փուլերում.

Գործունեության փուլերը

4 փուլերում է աշխատելու՝

- Մինչդատական;
- Դատական;
- Պատժի կատարման;
- Հետպատժյա

Մինչդատական փուլ

- Վերահսկողության իրականացում խափանման միջոցների ապահովման համար և պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ;

- Էլ.հսկողություն դատարանի որոշմամբ;
- Տնային կալանք կամ վարչական հսկողության կատարում;
- Ռիսկերի և կարիքների գնահատում;
- Վերասոցիալականացման ծրագրեի իրականացում /մեղադրյալի համաձայնության դեպքում/
- **Անվտանգության միջոցների կատարման ապահովումը**
  - որոշակի վայրեր այցելելու արգելք,
  - հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն,
  - վարքագծի նկատմամբ հատուկ հսկողություն,
  - ընտանեկան հսկողություն,
  - հատուկ կրթադաստիարակչական հիմնարկում տեղավորում,
  - կրթական, մշակութային, մարզականկամայլծրագրերիններգրավվում
  - էլ.հսկողությամբ կամ առանց դրա

Մինչդատական փուլումայն հիմնականում պատրաստում է մինչդատական զեկույցներ, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում անվտանգության և այլընտրանքային խափանման միջոցների կատարման նկատմամբ, այդ թվում՝ էլեկտրոնային հսկողության միջոցով: Շահառուի համաձայնությամբ իրականացվում են նաև վերականգնողական աշխատանքներ:

Դատական փուլ

- Խափանման միջոցներիկատարում
- Հաշտարարարություն

Դատական փուլում, ի լրումն վերը նշվածի, կարող է նաև հաշտարարություն իրականացնել տուժողի և իրավախախտի միջև:

Պատժի կատարմանփուլ

- Այլընտրանքային պատիժներիկատարում;
- Վերահսկողություն այն շահառուներինկատմամբ, ում պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ազատվել է վաղաժամկետ կամ պատժի կատարումը հետաձգվել է

- Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցի պատրաստում
- Ռիսկերի և կարիքների գնահատում
- Վերասոցիալականացման ծրագրերի իրականացում
- Հաշտարարության իրականացում

Ամենակարևոր աշխատանքներն իրականացվում են պատժի կրման փուլում: Եթե անձի նկատմամբ կիրառվում է պրոբացիա կամ նա պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվում է, ապա մշակվում է աշխատանքի անհատական ծրագիր: Սա, մի կողմից, ապահովում է դատարանի նշանակած պատժի և սահմանափակումների իրականացումը, մյուս կողմից՝ նպաստում է կրկնահանցագործության կանխարգելմանը՝ վերասոցիալականացման ծրագրերի միջոցով ետ պահելով անձին իրավախախտում կատարելուց:

Հետպատժյա փուլ

- պատժի կրումից հետո մինչև դատվածության մարումը կամ օրենքով սահմանված կարգով դրա հանումը
- Զեկույցների պատրաստում
- Հաշտարարություն
- Էլ.հսկողություն

Հետպատժյա փուլում Պրոբացիայի ծառայության աշխատանքները գրեթե չունեն հարկադրանքի միջոցների բաղադրիչ: Այս փուլը ներառում է տուժողի և իրավախախտի միջև հաշտարարության իրականացումը և վերականգնողական ծրագրերը, որոնց իրավախախտը մասնակցում է կամավորության սկզբունքով:

Տուժողի և իրավախախտի հաշտեցում

Պրոբացիայի ծառայությունը պետք է նպաստի տուժողի և իրավախախտի հաշտեցմանը: Ազատազրկման հետ չկապված պատիժների կիրառման դեպքում կամ հետպատժյա փուլում այն նշանակվում է Պրոբացիայի ծառայության ղեկավարի կողմից սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ: Դատաքննության փուլում հաշտարարությունը նշանակվում է դատավորի նախաձեռնությամբ: Երկու դեպքերում էլ Պրոբացիայի ծառայության ղեկավարը հանձնարարում է պրոբացիայի

համապատասխան ծառայողին իրականացնել կողմերի հաշտեցում: Հաշտարարությունը իրականացվում է երկու կողմերի համաձայնությամբ, իսկ արդյունքը կարող է լինել հաշտության համաձայնագիրը, որով կարգավորվում են վնասի հատուցման հարցերը:

Վերահսկողություն

Պրոբացիայի ծառայողը մշակում է շահառուի վերահսկողության անհատական ծրագիր և տարբեր միջոցների կիրառմամբ (էլեկտրոնային հսկողություն, տնայցեր, պրոբացիայի շահառուի հետ հանդիպումներ և այլն) երաշխավորում է շահառուի կողմից պրոբացիայի պայմանների պահպանումը: Եթե պրոբացիայի կանոնները խախտվում են, ապա պրոբացիայի ծառայողը պետք է զեկուցի այդ մասին դատարանին և կարող է միջնորդել սահմանելու լրացուցիչ պայմաններ կամ նույնիսկ ազատազրկում ՝ իրավախախտի վարքը շտկելու նպատակով:

Վերաինտեգրման պլանավորում

Պրոբացիայի ծառայողը շահառուին առաջարկում է վերականգնողական անհատական ծրագիր և, անհրաժեշտության դեպքում, ուղղորդում է տարբեր կազմակերպություններ և ծառայություններ, որոնք կարող են օգնել շահառուին զերծ մնալ իրավախախտ գործողություններից: Ծրագիրը պետք է հիմնված լինի յուրաքանչյուր շահառուի կարիքների գնահատման վրա: Պրոբացիայի ծառայողները խրախուսում և մոտիվացնում են շահառուներին՝ մասնակցելու կրթական, մշակութային, սպորտային միջոցառումներին և, առհասարակ, վերաինտեգրման գործընթացին:

Զեկույց դատարանին

Պրոբացիայի ծառայության գործառույթներից է նաև դատարանին մինչդատական կամ պատժի նշանակման փուլերում համապարփակ զեկույցների ներկայացումը: Զեկույցի նպատակն է աջակցել դատավորին խափանման միջոցի, պատժի և սահմանափակումների ընտրության վերաբերյալ կայացնել այնպիսի որոշում, որը կբխի իրավախախտում կատարած անձի կարիքներից և ռիսկերից: Այս զեկույցներն ունեն խորհրդատվական բնույթ և պատրաստվում են դատավորի պահանջով:

Ռիսկերի և կարիկների գնահատում

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Պրոբացիայի ծառայության գործունեության գլխավոր ուղղությունների մեկն է

Պրոբացիայի ծառայողների աշխատանքի արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մշակել պրոբացիայի շահառուի բացահայտված ռիսկերին և պահանջմունքներին համապատասխան վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումներ, ապահովելով արդարադատության համակարգի՝ տեղին, թիրախավորված, անհատականացված և պատշաճ արձանագանքը: Դա երաշխավորելու համար անհրաժեշտ է, որ պրոբացիայի յուրաքանչյուր շահառուի ռիսկերի ու պահանջմունքների գնահատումը կատարվի անմիջապես, երբ անձը դառնում է ծառայության շահառու: Անձի քրեածին պահանջմունքների, ինչպես նաև հասարակությանը, այլ անձանց և ինքն իրեն ներկայացնող ռիսկերի, պատշաճ բացահայտումն ու գնահատումը հնարավորություն կտան կազմելու պրոբացիայի յուրաքանչյուր շահառուի պատժի կատարման անհատական ծրագիր՝ ընտրելով վերահսկողության ամենաարդյունավետ ռեժիմը և առաջարկելով թիրախավորված վերականգնողական ծրագիր:

Քրեական արդարադատության և պատիժների համակարգի գլխավոր նպատակներն են, ի թիվս այլնի, կրկնահանցագործության կանխարգելումը (ՀՀՔրեականօրենսգիրք, հոդված 2) և իրավախախտում կատարած անձի ուղղումը (ՀՀՔրեականօրենսգիրք, հոդված 48), որոնք, վերջին հաշվով, ծառայում են մեկ ընդհանուր նպատակին, այն է՝ կանխարգելել տվյալ անձի իրավախախտ վարքագիծը և խթանել նրա օրինապահ կենսակերպը:

Այդ նպատակի հասնելու համար նախատեսվում է ռիսկերի և կարիքների գնահատման ընթացակարգը, և այդ գործառույթն անմիջականորեն վստահված է Հայաստանի պրոբացիայի ծառայությանը. “Պրոբացիայիշահառուիվերաբերյալռիսկերիևպահանջմունքներիգնահատմանհիմանվրապրոբացիայիծառայողըվերահսկողությանպլանումսահմանումէպրոբացիայիշահառուիվերահսկողությանենթակագործողությունները”

"Պրոբացիայի մասին" օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ռիսկերի և պահանջմունքերի գնահատումը դա պրոբացիայի շահառուի կողմից կատարված կամ ենթադրյալ կատարված արարքի պատճառների վերհանումը և այնպիսի միջոցների պլանավորումն է, որոնք հնարավորություն կտան նվազեցնել կատարված կամ ենթադրյալ կատարված հանցագործության կրկնության հավանականությունը:

«Ռիսկը» գնահատում է կրկնահանցագործության հավանականությունը՝ հաշվի առնելով իրավախախտում կատարած անձի քրեական անցյալը և որոշակի կենսագրական փաստեր: Ռիսկերը ներառում են կրկնահանցագործության ռիսկը և վնաս պատճառելու ռիսկը

«Կարիքները» բացահայտում են կրկնահանցագործությանը նպաստող այն գործոնները, որոնք թեև առկա են, այնուամենայնիվ նպատակային միջամտության դեպքում կարող են չեզոքցվել:

Ըստ այդմ, ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը կիրառվում է հիմնական երկու հարցերին պատասխանելու համար.

1. թե որքան վտանգավոր է իրավախախտում կատարած անձը հանրության համար (ռիսկի մակարդակը)

2. և որ գործոններին անհրաժեշտ ուշադրություն դարձնել՝ տվյալ անձի կողմից կրկնահանցագործության կատարման ռիսկը նվազեցնելու նպատակով (կարիքների մակարդակը պետք է գնահատվի՝ կրկնահանցագործության կատարման ընդհանուր ռիսկը նվազեցնելու նպատակով)

Ռիսկի գնահատման պաշտոնական մեթոդները կարող են դասակարգվել որպես փորձագիտական կարծիքի վրա հիմնված գնահատման մեթոդ և ակտուարական մեթոդ (վիճակագրական տվյալների վերլուցության վրա հիմնված):

Հայաստանում կիրառվում է միայն փորձագիտական կարծիքի վրա հիմնված գնահատման մեթոդը, ըստ որի դատավորները և պրոբացիայի ծառայողները, հիմնվելով իրենց գիտելիքի և փորձի վրա, կանխատեսում են, թե, արդյոք, իրավախախտում կատարած տվյալ անձը կատարելու է կրկնահանցագործություն, թե՝ ոչ: Փորձագետները հաշվի են առնում անձի բնավորության առանձնահատկությունները, հոգեկան հիվանդությունները, ինչպես նաև կենսաբանական, սոցիալական և հոգեբանական գործոնները, որոնք, նրանց կարծիքով, նպաստում են հանցագործության կատարմանը:

Ակտուարական մեթոդը պահանջում է մեծ քանակությամբ վիճակագրական տվյալների հավաքագրում, որի հիման վրա գնահատվում է իրավախախտում կատարած անձի կրկնահացագործության կատարման հավանականությունը: Այս մեթոդն արտացոլված է ռիսկերի և կարիքների գնահատման հատուկ գործիքներում, որոնք օգնում է քրեական արդարադատության ոլորտի մասնագետներին տեղեկացված որոշում կայացնել առ այն, թե ինչպես է անհրաժեշտ աշխատել իրավախախտում կատարած անձանցից յուրաքանչյուրի հետ: Ենթադրվում է, որ այս մեթոդն ավելի օբյեկտիվ պատկեր է ապահովում, քան՝ առաջինը:

Հաջորդիվ ներկայացնում ենք այդ գործիքների առավելությունները.

1. դրանք հաշվի են առնում մի խումբ նախապես հայտնի գործոնները, որոնք, բազմաթիվ հետազոտությունների արդյունքների և վիճակագրական տվյալների համաձայն, ազդում են կրկնահանցագործության մակարդակի վրա
2. դրանք օգնում են բացահատել իրավախախտում կատարած տվյալ անձին բնորոշ հատուկ գործոնները
3. դրանք նվազեցնում են «մարդկային գործոնը» այսինքն ավելի չեզոկ և օբյեկտիվ են
4. ռիսկերի և կարիքների գնահատման լավագույն գործիքները կանխատեսում են կրկնահանցագործության կատարման հավանականությունը հազարավոր գործերի վերլուծության արդյունքների հիմնար վրա։ Այս թիվը գերազանցում է այն հնաավոր առավելագույնը, որը կարող են ապահովել մասնագետներն իրենց ամբողջ մասնագիտական գործունեության ընթացքում։

ՔՀԻ-ն իր առջև հավակնոտ նպատակ դրեց՝ մշակելու նման գործիք հայկական իրականությանը համապատասխան։

Այնուամենայնիվ, սա չափազանց բարդ խնդիր էր, քանի որ

- հայկական իրականությանը համապատասխան համալիր գործիք ստեղծելու համար բացակայում է անհրաժեշտ տվյալների բազան
- բացի այդ, շատ քիչ թվով հետազոտություններ կան, որոնց հիման վրա պետք է սահմանվեին տվյալ երկրին բնորոշ հատուկ գործոնները։

Եվ աշխատելով գործիքի վրա ու ներգրավելով տարբեր ոլորտների փորձագետների (հոգեբաններ, քրեագետներ, վիճակագրական տվյալների մշակման մասնագետներ և իրավաբաններ), ինչպես նաև խորհրդակցելով պատիժների կատարման ոլորտի մասնագետների հետ՝ պարզ դարձավ, որ գործիքի գլխավոր նպատակներին ավելացավ ևս մեկը, այն է՝ իրավախախտում կատարած անձանց վերաբերող տվյալների հավաքագրումն ու մշակումն է։Այսպիսով, մեր առջև դրված խնդիրն էլ ավելի բարդացավ. Մենք նպատակադրվեցինք ստեղծել «ինքնազարգացող» գործիք, որի արյդունավետությունն հայկական իրականության համատեքստում ամեն օգտագործումով պետք է բարձրանա։

ՔՀԻ-ն մշակել էկարիքների և ռիսկերի գնահատման գործիքը, որը նաև հավաքագրում է իրավախախտում կատարած անձանց վերաբերող տվյալները։

Գործիքը կազմված է երկու կարևոր փուլերից.
1) ստատիկ գործոնների գնահատում, ինչպիսք են տարիքը, սեռը, քրեական անցյալը.
2) Երկրորդ փուլը կարիքների, և, առաջին հերթին, քրեածին կարիքների գնահատումն է, որոնք, պատշաճ աշխատանքի դեպքում, կնվազեցնեն ռիսկը։Այդ փուլում հաշվվում են և գործոնների յոթ հիմնական խմբեր, որոնք, միջազգային փորձի ուսումնասիրության համաձայն, ազդում են կրկնահանցագործության կատարման հավանականության վրա։

Տեղեկությունները հիմնականում հավաքագրվել են հետևյալ աղբյուրներից՝դատավճիռներ, հարցազրույցներ պրոբացիայի շահառուների հետ, ոստիկանության տեղեկատվական կենտրոն, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տնայցեր և հարցազրույցներ ընտանիքի անդամների հետ։

Այն բանից հետո, երբ գործիքը ներբեռնված է անհրաժեշտ տվյալներով, այն հաշվարկում է ռիսկի մակարդակը և բացահայտում է այն գործոնները, որոնք առաջին հերթին պետք է թիրախավորվեն՝ նվազեցնելու կրկնահանցագործության կատարման ռիսկը.

Այդպիսով, պրոբացիայի ծառայողը, գործիքի կանխատեսման, ինչպես նաև իր անձնական փորձագիտական կարծիքի հիման վրա, կմշակի պատժի կրման պլանը, որը կնախատեսի միջամտության համապատասխան միջոցառումներ՝ հաշվի առնելով իրավախախտում կատարած տվյալ անձի հատուկ կարիքները, ինչպես նաև կաջակցի որաշման կայացմանն առ այն, թե ինչպիսի վերահսկողություն է անհրաժեշտ սահմանել։

Եվ վերջապես գլոբալ առումով գործիքը պահեստավորում է տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել հետագա վերլուծությունների և ռիսկերը գնահատելու համար կիրառվող բանաձևի կատարելագործման նպատակով՝բարձրացնելով իրավախախտում կատարած անձանց հնարավոր ռիսկերը և քրեածին գործոնները բացահայտելու ճշգրտության աստիճանը։

Պրոբացիայի շահառուի անձնական գործն պատժի կատարման անհատական ծրագիր

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ պրոբացիայի ծառայողը պետք է մշակի պատժի կատարման անհատական ծրագիր՝ վերահսկողության պլան, որը հանդիսանում է դեպքի վարման ամենակարևոր գործիքներից մեկը: Օրենքով նախատեսված կարգով,

հնարավորության դեպքում այն հաշվի կառնի առաջարկվող վերասոցիալականացման միջոցառումներին պրոբացիայի շահառուի մասնակցելու մոտիվացիայի մակարդակը ու համաձայնությունը:

Միջամտության, ընտրված վերահսկողության ռեժիմի և ջանքերի արդյունավետությունն երաշխավորելու համար կարևոր է կատարել ծրագրի պարբերական վերագնահատում:

Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների լուծման համար կատարվող աշխատանքների բարձր արդյունավետությունը կարող է մեծապես կախված լինել պրոբացիայի շահառուների անձնական գործերի վարման արդյունավետությունից՝ հաշվի առնելով օրենսդրական պահանջների կատարումը և գործերի վարման մեթոդիկայի ճիշտ ընտրությունը:

«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի ձևակերպմամբ՝ պրոբացիայի շահառուի անձնական գործը պրոբացիայի շահառուի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթ է: Օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված է անձնական գործում ներառվող տեղեկատվության ցանկը:

Այսպես, պրոբացիայի յուրաքանչյուր շահառուի անձնական գործը պետք է պարունակի շահառուի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, ներառյալ՝

1) անունը, ազգանունը, հայրանունը.
2) ծննդյան օրը, ամիսը, տարին.
3) բնակության, հաշվառման վայրը (հասցեն).
4) ընտանեկան դրությունը.
5) գույքային դրությունը.
6) դատական ակտի կամ կատարման ենթակա այլ իրավական ակտի վերաբերյալ տվյալներ.
7) նախկին դատվածությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն.
8) սոցիալական միջավայրը՝ սոցիալական և մշակութային պայմաններ, ներառյալ՝ վերաբերմունք, ինչպես նաև ֆիզիկական շրջապատ, ուր անձն ապրում է, կրթվում, աշխատում, տեղաշարժվում և կազմակերպում իր անձնական կյանքը.
9) պրոբացիայի ծառայության հսկողության ներքո գտնվելու ժամանակահատվածում իրավունքների և պարտականությունների շրջանակը.
10) այլընտրանքային խափանման միջոցները և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները կատարելուն վերաբերող պարբերաբար թարմացվող տեղեկություններ.
11) ռիսկերի և պահանջմունքների պարբերական գնահատման տվյալներ.

12) անձի վերաբերյալ կազմված բնութագրերն ու խորհրդատվական զեկույցները.
13) անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տվյալներ.
14) վերասոցիալականացման միջոցառումները.

Նշված ցանկը սպառիչ չէ. անձնական գործում կարող են ներառվել նաև օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր և տվյալներ: Ընդ որում, Օրենքի տարբեր ձևակերպումների համեմատության արդյունքում ի հայտ են գալիս իրավական տեխնիկայի խնդիրներ, որոնք երբեմն կասկած են առաջացնում Օրենքում օգտագործվող եզրույթների վերաբերյալ:

Օրինակ, Օրենքի տարբեր հոդվածներում տարանջատված է անձնական գործի և վերահսկողության պլանի կազմումը, հաշվառման քարտի լրացումը.

Պրոբացիայի շահառուի անձնական գործը, վերահսկողության պլանը և հաշվառման քարտը վարվում են առանձին: Ընդ որում, վերահսկողության պլանը և հաշվառման քարտը որպես առանձին փաստաթղթեր օգտագործվելու հնարավորությունը նախատեսված է օրենքով.

Սակայն ի տարբերություն հաշվառման քարտի, որը պահպանվում է նաև անձնական գործի ոչնչացումից հետո, վերահսկողության պլանը նպատակահարմար չէ կազմել անձնական գործից առանձին, քանի որ այն իր մեջ ներառում է մի շարք տվյալներ, որոնք, համաձայն Օրենքի, ներառվում են անձնական գործում, օրինակ՝ շահառուի իրավունքները և պարտականությունները, նրա հետ տարվող վերասոցիալականացման միջոցառումները և ծրագրերը: Հետևաբար, կազմելով և դիտարկելով վերահսկողության պլանը որպես առանձին փաստաթուղթ՝ նպատակահարմար է ներառել այն անձնական գործի փաթեթում՝ տվյալների անհարկի կրկնությունից խուսափելու համար:

Վերահսկողության պլանի առանձին նշումը պայմանավորված է նաև նրանով, որ այն, ի տարբերություն անձնական գործի, պրոբացիոն ծառայության ոչ բոլոր խնդիրների իրականացման դեպքում է կազմվում, մասնավորապես, չի կազմվում խորհրդատվական զեկույց ներկայացնելիս:

Օրենքը նախատեսում է շահառուի իրավունքը ծանոթանալ իր անձնական գործին, սակայն չունի առանձին սահմանում վերահսկողության պլանին ծանոթանալու իրավունքի վերաբերյալ այն դեպքում, երբ վերահսկողության պլանը հատկապես պետք է բացահայտ լինի շահառուի համար, քանի որ դրանով անմիջականորեն սահմանվում են իր իրավունքներն ու պարտականությունները, վերասոցիալականացման միջոցառում¬ների և ծրագրերի ցանկը, վերահսկողության ենթակա բոլոր գործողությունները և դրանց կատարման ժամկետները:

Օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է համաձայնության սկզբունքը, ըստ որի՝ պրոբացիայի ծառայության կողմից որոշումների կայացման, ինչպես նաև վերահսկողության պլանի մշակման ընթացքում հնարավորինս հաշվի են առնվում պրոբացիայի շահառուի կարծիքը և համաձայնությունը, ինչպես նաև հնարավորինս ապահովվում է նրա ներգրավվածությունը դրանց կայացման և մշակման գործընթացին: Նշված սկզբունքի պահպանումը Օրենքի ներկա շարադրանքի պայմաններում հնարավոր է միայն եթե ապահովված է շահառուի իրավունքը ծանոթանալ նաև իր վերաբերյալ կազմված վերահսկողության պլանին՝ որպես անձնական գործի մաս:

Վերը նշված պատճառաբանությամբ ստորև ներկայացվում են շահառուի անձնական գործի վարման ինչպես Օրենքով ուղղակիորեն նշված չափանիշները, այնպես էլ Օրենքի տրամաբանությունից բխող, սակայն ոչ հստակ ձևակերպում ունեցողները: Ընդ որում, բացի Օրենքով հստակ սահմանված տեղեկատվությունից, շահառուի անձնական գործում անհրաժեշտ է ներառել տեղեկատվություն, որը անհրաժեշտ կարող է լինել վերջինիս վերահսկողության ծրագրերի մշակման, վերասոցիալականացման ողղությամբ, օրինակ տեղեկություններ ընտանիքի, շրջապատի, առողջական վիճակի և այլնի վերաբերյալ:

> Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ պրոբացիայի շահառուն պարտավոր է.
> 3) կատարել պրոբացիայի ծառայողի օրինական պահանջները.
> …
> 6) սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում պրոբացիայի ծառայողին տրամադրել հավաստի տեղեկություններ.

Միևնույն ժամանակ թե՛ գործող քրեական դատավարության օրենսգիրքը, թե՛ Օրենքը չեն նախատեսում այն դեպքերը, երբ պրոբացիայի շահառուն պարտավոր է պրոբացիայի ծառայողին ներկայացնել տեղեկատվություն: Օրենքը նախատեսում է պրոբացիայի շահառուի՝ ծառայությանը ներկանալու պարտականությունը, իսկ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը՝ չներկայանալու համար պատասխանատվությունը, սակայն պրոբացիայի շահառուն չի կարող պատասխանատվության ենթարկվել, եթե փաստացի ներկայացել է պրոբացիոն ծառայություն, սակայն հրաժարվում է որևէ տվյալ ներկայացնել:

Հետևաբար, ներկա իրավակարգավորման պայմաններում պրոբացիոն ծառայողը անձնական գործի վարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու երաշխիք կարող է ունենալ միայն պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ կազմակերպություններին հարցումներ կատարելու միջոցով: Այդպիսի հարցումների

արդյունքում ստացված տեղեկատվությունը չի խախտում պրոբացիայի շահառուների անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, քանի որ ուղղակիորեն նախատեսված է օրենքով: Պրոբացիոն ծառայությունը օրենքով սահմանափակված է միայն ֆինանսական կազմակերպություններից և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից բանկային և այլ գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու հարցում: Ընդ որում, օրենքը չի սահմանափակում պրոբացիայի շահառուի վերաբերյալ պետական, ռազմական կամ բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ ստանալու՝ պրոբացիոն ծառայության իրավասությունը:

Պրոբացիոն ծառայության աշխատանքի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ են համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ պրոբացիայի շահառուների պարտականությունների լրացման վերաբերյալ: Նման պարտականությունների սահմանման դեպքում պրոբացիոն ծառայողը հնարավորություն կունենա պարտավորեցնել շահառուին ներկայացնել անձնական գործի վարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Բացի Օրենքում նշված տվյալներից, որոնք համապատասխան օրենդրական փոփոխություններից հետո պարտադիր կլինեն շահառուի կողմից ներկայացման համար, պրոբոցիոն ծառայությանը կարող են պիտանի լինել շահառուի կողմից կամավոր ներկայացվող տվյալներ՝ անձնական ունակությունների, ընտանիքի անդամների, շրջապատի, բանկային տվյալների վերաբերյալ: Այդպիսի տվյաներ կարող են պահանջվել նաև այն դեպքում, երբ պրոբացիայի շահառուն իր պարտականությունների կատարման անհնարինության կամ դժվար լինելու վերաբերյալ առարկություններ կներկայացնի: Օրինակ, շահառուն կարող է պարտականության չկատարման համար որպես պատճառ ներկայացնել ֆինանսական վատ դրությունը, ինչի դեպքում կարող է կամավոր ներկայացնել իր հարցմամբ ստացված տեղեկատվություն իր բանկային հաշիվների վերաբերյալ, իսկ չներկայացման դեպքում պրոբացիոն ծառայողը շահառուի առարկությունը կարող է համարել չհիմնավորված:

Անձնականգործիվարում, ձեվաթղթեր

Անձնական գործի վարման աշխատանքի հեշտացման, կանոնակարգված մշակման և պրոբացիայի խնդիրների համար առավելագույն տեղեկատվություն ներառելու համար անհրաժեշտ են գործի վարման հետևյալ ձևաչափը.

1. Անձնական գործի տվյալներ.

Այս բաժնում ներառվում են անձնական գործի թղթապանակի տիտղոսաթերթը, անձնական գործի համարը, անձնական գործի վարման սկզբի և ավարտի ամսաթվեր և այլն: Բաժինը պետք է ներառի նաև անձնական գործում պահվող փաստաթղթերի ցանկերը՝ փաստաթղթերի անվանումով և էջերի նշումով:

2. ձևաթղթեր, որոնք պարունակում են Պրոբացիայի շահառուի անձնական տվյալները ներառյալ՝

- անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, ծննդյան ամսաթիվ,
- քաղաքացիությունը, անձնագրային տվյալներ
- առնչությունը զինվորական ծառայությանը,
- կոնտակտային տվյալներ՝ հեռախոսահամարներ, հաշվառման և կամ փաստացի բնակության հասցեներ, էլեկտրոնային հասցեներ,
- ընտանեկան կարգավիճակ, ընտանիքի կազմ /համատեղ բնակության նշումով/
- կրթություն /նախկինում ստացած, շարունակվող/
- աշխատանք /գրանցված աշխատանք, եկամտի այլ աղբյուրներ/
- գույքային դրություն /շահառուի , ընտանիքի սեփականությունը, սոցիալական ապահովության դասիչներ, շահառուի և նրա ընտանիքի անհրաժեշտ ծախսերը/
- շահառուի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տվյալներ, նաև նրա հետ համատեղ բնակվող անձանց առողջական վիճակը

Նույն բաժնում պահվում են ձևաթղթում լրացված տեղեկատվությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

3. ձևաթղթեր, որոնք պարունակում են տեղեկատվություն պրոբացիոն ծառայության կոնկրետ նպատակի, շահառուի իրավական կարգավիճակի վերաբերյալ

- խափանման միջոցի կամ պատժի տեսակը, կրման պայմանները /հիմք հանդիսացող դատական կամ այլ իրավական ակտը/, կատարմանը վերաբերող տեղեկություններ
- նախկին դատվածությունները և հանցանքների նկարագիրը,
- պրոբացիոն ծառայության հսկողության ներքո գտնվելու ժամանակահատվածում շահառուի իրավունքների և պարտականությունների շրջանակը՝ շահառուի կողմից ծանոթացված լինելու հաստատումով:

- փաստաթղթեր հաշտարարության գործընթացի վերաբերյալ/դատական ակտ, միջնորդություն/
- հաշտության համաձայնություն

Բաժնին կից պահվում են համապատասխան փաստաթղթերը

4. Պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահաջմունքների գնահատման վերաբերյալ փաստաթղթեր

- Ռիսկերի և պահանջմունքների գործիքների միջոցով ստացված եզրափակիչ արդյունքները,
- Ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ։
- Ռիսկերի և պահանջմունքների պարբերական վերագնահատումների արդյունքներ

5. Վերահսկողության պլանի կազմման վերաբերյալ ձևաթղթեր

- Վերահսկողության տեսակը, կապի տեսակները /այցելություն, տնայց, հեռախոսակապ, տեսակապ/, պարբերականությունը,
- Վերահսկողության գրանցամատյան՝ կապի յուրաքանչյուր դեպքի տվյալների գրանցման համար
- Էլեկտրոնային մոնիթորինգ,
- Վերահսկողության պայմանների խախտումների արձանագրում

6. Անձի վերասոցիալականացմանն ուղղված գործողությունների ծրագիր

- Պրոբացիոն ծառայողի և շահառուի համատեղ մշակած ծրագիր՝ շահառուի ռիսկերի գնահատման, դրանց վերաբերյալ առաջարկների ուղղությամբ մշակված առաջադրանքներ, կատարման եղանակներ և ժամկետներ, արդյունքների գնահատում,
- Սոցիալական վերաինտեգրմանը նպաստող ծրագրերի և գործողությունների ցանկ, շահառուի մասնակցության բնույթը, ժամկետները, արդյունքները։

Այս բաժինը չի ներառվում անձնական գործում՝ խափանման միջոցների կիրառման դեպքում

7. Արձանագրություններ./ըստ անձնական գործի ժամանակագրության/

- Պրոբացիոն ծառայությանը չներկայանալու, շահառուին չհայտնաբերելու վերաբերյալ
- Պատժի կամ խափանման միջոցի կրման պայմանները խախտելու վերաբերյալ
- Պրոբացիոն ծառայողին գործողությունները խոչընդոտելու վերաբերյալ,
- Պրոբացիոն ծառայողի այցելությունների վերաբերյալ,
- Օրենքով նախատեսված այլ դեպքերում կազմվող արձանագրություններ

8. Ծանուցումներ

Պահպանվում են գործի վարման ընթացքում շահառուին և այլ անձանց ուղարկված ծանուցումները

9. Շահառուի վերաբերյալ կազմված բնութագրերն ու խորհրդատվական զեկույցները։

Անձնական գործում այս բաժինների առանձնացումը տարբերվում է պետական մարմիններում գործերի վարման ընդունված կարգից, երբ գործի փաստաթղթերը դասավորվում են ըստ կազմման և ստացման ժամանակագրության։ Յուրաքանչյուր բաժին կրկին դասավորվում է ըստ ժամանակագրական հաջորդականության, սակայն բաժինների առանձնացումը նպատակ է հետապնդում դյուրացնել պրոբացիոն ծառայողի առօրյա աշխատանքը, դասակարգել գործում պահվող փաստաթղթերը ըստ բովանդակության և կարևորության։ Օրինակ, եթե շահառուի ռիսկերի գնահատումները կատարվում են տարբեր ժամանակահատվածներում, ավելի հեշտ է լինում գնահատումները համեմատել, երբ դրանք գործում տեղակայված են հաջորդաբար, այլ ոչ թե տարբեր արձանագրությունների և ծանուցումների միջակայքով։

ՀՀ-ում պրոբացիայի ծառայության խնդիրների նկարագրություն

ՔՀԻ-ի կողմից իրականացված գործող օրենսդրության և պրակտիկայի վերլուցության արդյունքում հավաքագրված՝ ՀՀ-ում Պրոբացիայի ծառայությանը վերաբերող խնդիրները.

1. Ոչ բավարար աշխատակազմ

1.1. Հատուկ ծառայությունից անցում քաղաքացիական ծառայությանը.
Ծառայությունը հիմնադրվել է ՀՀ ԱՆ ՔԿԾ Այլընտրանքային պատիժների կատարման բաժնի հիման վրա, բայց որպես անկախ ծառայություն սկսել է գործել ՀՀ ԱՆ ենթակայության տակ Այլընտրանքային պատիժների երկու բաժիններում ավելի քան 12 ամիս տևողությամբ պիլոտային ծրագիր իրականացնելուց հետո: Դա նշանակում է, որ Ծառայությունը «ժառանգել է» գույքը: 2018 թվականի հունվարի դրությամբ բացվել են XX նոր հաստիքներ, սակայն միևնույն է դա բավարար չէ: Իրավիճակը չի համապատասխանում ՀՀ ԱՆ-ի կողմից նախնական հայտարարված մոտեցմանը, որը նաև ընդգրկվել էր Պրոբացիայի ծառայության ստեղծման հայեցակարգում՝ ունենալ մինչև 200 պրոբացիայի ծառայող, դեպքի վարողներ, որոնք աշխատելու են մոտ 50 գործով:
Սակայն, նույնիսկ առկա համակարգի պարագայում նորաստեղծ ծառայությունը կունենա ոչ բավարար աշխատակազմի խնդիր:
Այլընտրանքային պատիժների կատարման աշխատակիցները կրում էին համազգեստ և ստանում էին լրացուցիչ արտոնություններ: Մինչդեռ Պրոբացիայի մասին օրենքով նախատեսվում է, որ պրոբացիայի բոլոր աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են: Սա նշանակում է, որ Այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցները դառնալով Պրոբացիայի ծառայության աշխատակիցներ, կորցրել են իրենց դասային աստիճանը, համակարգում առաջխաղացման հնարավորությունները և սոցիալական արտոնությունները: Արդյունքում՝ ծառայության փոխակերպման ժամանակ Այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցների առնվազն 25%-ը չմիացավ Պրոբացիայի ծառայությանը:
1.2. Աշխատակիցների համար պահանջները
2016թ.-2017-ի դեկտեմբերին կայացած որակավորման քննության ժամանակ Պրոբացիայի որոշ ծառայողներ մեկ այլ խնդրի հետ առնչվեցին: Նույնիսկ այն դեպքում, երբ այդ պահի դրությամբ անձը ուներ վարչության պետի պաշտոն, նա դեռևս կարող էր իրավունք չունենալ աշխատանքի անցնել Պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայողի համապատասխան փորձառություն չունենալու պատճառով:
1.3. Ոչ իրավաբան մասնագետներով ծառայության համալրման անհրաժեշտությունը
Օրենքի համաձայն պրոբացիայի ծառայողները պետք քայլեր ձեռնարկեն պրոբացիայի շահառուների վերականգնողական աշխատանքներն իրականացնելու ուղղությամբ: Սակայն ներկա աշխատակազմի հիմնական մասը իրավաբանական կրթություն ունի և չունի բավարար հմտություններ ակնկալվող ձևով դեպքերի հետ

աշխատելու համար: Այդ պատճառով ծառայությունը սոցիալական աշխատողներով և հոգեբաններով համալրելը առանցքային նշանակություն ունի ծառայության նպատակներն ապահովելու համար: Օրենքով առաջարկվում է, որ կամավորներ ընդգրկվեն, սակայն մասնակիցների մեծամասնությունը կամավորների կարողությունների, ինչպես նաև աշխատակազմի կարողությունների ամրապնդման այս մոտեցման արդյունավետության կապակցությամբ մտահոգություն արտահայտեց:

2. Նոր աշխատանքային մշակույթ

Արդարադատության նախարարության կողմից բազմիցս նշվել է, որ ակնկալվում է փոխել Պրոբացիայի ծառայության մոտեցումը պրոբացիայի շահառուների նկատմամբ՝ «միայն պատիժ» մոտեցումը թողնելով անցյալում: Մինչդեռ, պրոբացիայի ծառայողները վերահսկողության հետ զուգահեռ պետք է իրական քայլեր ձեռնարկեն աջակցելու պրոբացիայի շահառուին հոգալու իր կարիքները՝ նպատակ ունենալով նպաստել շահառուի վերաինտեգրմանը հասարակությունում: Սրա համար որոշակի ժամանակ կպահանջվի, քանի որ ծառայողների մեծամասնությունը նախկինում աշխատել է քրեակատարողական ծառայությունում: Եթե կարճ ժամանակահատվածում նոր աշխատակիցներ, այդ թվում հոգեբաններ և սոցիալական աշխատողներ, չընդգրկվեն, դժվարությամբ կհաջողվի փոխել ձևավորված մշակույթը և ծառայողների մտածողությունը:

3. Անհրաժեշտ կարողություններ, որպեսզի Ծառայության վրա օրենքով դրված գործառույթներն իրականացվեն:

Պրոբացիայի ծառայության մասին օրենքի համաձայն ծառայողները պարտավոր են իրականացնել ռիսկերի և կարիքների գնահատում, այնուհետև արդյունքների հիման վրա վերահսկողական պլան մշակել և առաջարկել վերականգնողական ծրագիր բացահայտված խնդիրներին անդրադառնալու համար:
Բացի դրանից, որոշ դեպքերում պրոբացիայի ծառայողները պետք է իրականացնեն տուժողի և իրավախախտի միջև հաշտարարություն: Բոլոր այս գործառույթները նորամուծություն են ողջ աշխատակազմի համար: Սակայն ներկայումս ՀՀ ԱՆ-ն չի առաջարկել կարողությունների ամրապնդման գործողություններ, որպեսզի ապահովի, որ աշխատակազմը իրականացնի իր հիմնական գործառույթները:
Դրանից բացի օրենքով նախատեսվում է, որ պրոբացիայի անչափահաս շահառուները կարիք կունենան հատուկ վերաբերմունքի՝ հաշվի առնելով իրենց խոցելիությունը:
Այս դեպքում նույնպես դասընթացներ չեն իրականացվել ծառայողների

հմտությունները բարելավելու համար: Կարևոր է, որ գոնե սկզբնական փուլում որոշ աշխատակիցների վրա դրվեն հաշտարարության իրականացման և անչափահասների հետ աշխատանքներ տանելու պարտականություններ, և բոլոր այս աշխատակիցները պետք է պարտադիր անցնեն վերապատրաստումներ: Բացի այդ ծառայությանն անհրաժեշտ են աշխատանքային գործիքներ:

4. Տեխնիկական կարողություն

Օրենքի համաձայն Ծառայությունը պետք է պահպանի իր տվյալների բազան: Այս նպատակով անհրաժեշտ է ապահովել, որ երկրում գործող Ծառայության բոլոր գրասենյակները պատշաճ կահավորված լինեն, որպեսզի կարողանան թարմացնել տվյալների բազան, օգտագործել էլեկտրոնային տարբերակով գնահատման ձևաթղթեր, ներառյալ ռիսկերի և կարիքների գնահատման գործիքները: Ներկայումս Ծառայության տեխնիկական կարողությունների բարելավման հարցին դեռևս ԱՆ-ը անդրադարձ չի կատարել: Բացի այդ, Ծառայությունը պետք է էլեկտոնային մոնիտորինգ ներմուծի, մինչդեռ սարքավորումները Եվրոպայի խորհրդի աջակցությամբ վարձակալվել են կարճաժամկետ: Սակայն 2018թ.-ի համար ֆինանսավորում չի նախատեսվում սարքավորման վարձակալության կամ դրանք գնելու համար:
Էլեկտրոնային վերահսկողության կիրարկումը չափազանց կարևոր է նախնական կալանքի կիրառման պրակտիկան նվազեցնելու համար, ուստի կարևոր է ապահովել ֆինանսական միջոցներ այս սարքավորումները ձեռք բերելու համար:

5. Տեղեկատվածության բարձրացում

Քանի որ ծառայությունը նոր է, նրա դերի և գործառույթների մասին բավարար տեղեկատվություն չկա: Անհրաժեշտ է արդարադատության մարմինների, սոցիալական ծառայությունների, ՀԿ-ների և համապատասխան այլ շահառուների շրջանում բարձրացնել տեղեկատվությունը Պրոբացիայի ծառայության մասին և ապահովել համագործակցություն, մասնավորապես ծառայությունների տրամադրման ոլորտում: Որպես տեղեկատվության բարձրացման միջոց նշվել է մամուլի և նյութերի հրապարակումը:

Մաս III. Վաղաժամկետ ազատում

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑ

Համաձայն 2018 թվականի օրենսդրական կարգավորումների՝ ինստիտուցիոնալ առումով պայմանական վաղաժամկետ ազատման հարցում հիմնական դերակատարումը ընկնում է քրեակատարողական ծառայության և պրոբացիոն ծառայության վրա:

Նոր ընթացակարգի համաձայն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու նպատակով դատապարտյալը պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց ոչ շուտ, քան երեք ամիս առաջ իրավունք ունի գրավոր դիմում ներկայացնել պատիժը կատարող հիմնարկի վարչակազմին:

Պատիժըկատարող հիմնարկի վարչակազմը սույն մասով նախատեսված ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ պարտավոր է դատապարտյալին գրավոր կերպով ծանուցել դիմում ներկայացնելու կարգի մասին:

Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է պրոբացիայի ծառայությանը:

Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալուց հետո՝ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարի սահմանած ժամկետում և կարգով, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնին ՝ կցելով դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը:

Քրեակատարողական ծառայությունը և պրոբացիայի ծառայությունը պաշտոնական ծանուցումն ստանալուց հետո՝ 80 օրվա ընթացքում, կազմում և ներկայացնում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1- ին և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ զեկույցներ:

Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները դրական են, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան:

Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցներից մեկը բացասական է, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը ընդունում է

դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում, եթե դատապարտյալը տալիս է գրավոր համաձայնություն, և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան:

Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները բացասական են, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում: Այս դեպքում դատապարտյալը կարող է որոշումը բողոքարկել դատարան4:

Քրեակատարողական ծառայության կամ պրոբացիայի կողմից ներկայացված զեկույցներից մեկը բացասական է, ապա դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կարող է կրկին քննարկել համապատասխան որոշման ընդունումից հետո երեք ամիս անց:

Այն դեպքում, երբ առկա է դատարանի կողմից պատժից վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելըմերժելու մասին որոշում, ապա դատապարտյալի պատիժը կրելուց ազատման կամ չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կրկին կարող է քննարկման ներկայացվել վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամիս անց:

Ավելացնենք, որ Քրեակատարողական օրենսգրքում կատարած փոփոխություններով նախատեսվում են նաև անձի ընթացակարգային իրավունքները: Մասնավորապես, ըստ փոփոխությունների՝ 115-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Դրական զեկույցների դեպքում՝ մինչև զեկույցները դատարան ներկայացնելը, իսկ զեկույցներից առնվազն մեկի բացասական լինելու դեպքում՝ մինչև պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից որոշում ընդունելը, դատապարտյալն իրավունք ունի.

1) իրեն մատչելի ձևով, այդ թվում՝ համապատասխան մասնագետի միջոցով ծանոթանալու իր վերաբերյալ կազմված նյութերին և անվճար ստանալու դրանց պատճենները.
2) ներկայացնելու բացատրություններ և փաստաթղթեր, հանդես գալու հայտարարություններով. 3) հայտնելու իր կարծիքը իրեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ.
4) ստանալ իր վերաբերյալ կազմված զեկույցները.

5) հայերենին չտիրապետելու դեպքում պետության միջոցների հաշվին օգտվելու թարգմանչի ծառայություններից.
6) օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքներ։

Օրենսդրական նման դրույթի նախատեսմամբ հստակ չէ սակայն, թե արդյոք արդեն կազմված զեկույցների պայմաններում անձի բացատրությունները և հայտարարությունները ներառվելու են դրանցում և վերանայվելու են, ինչ հարցեր են քննարկվելու զեկույցների կազմվելուց հետո՝ բացառապես դատապարտյալի կողմիցդատարան դիմելու համաձայնությունը ստանալը, որի վերաբերյալ դատապարտյալն իրավունք ունի հայտնելու իր կարծիքը:

Մաս IV. «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի կողմից իրականացվող մոնիթորինգի գործիքներ

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՇԱՀԱՌՈՒՅԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Այս հետազոտության նպատակն է՝ հասկանալ Պրոբացիայի պետական ծառայության աշխատանքի արդյունավետությունը:

Շահառու
Մարզ
Քաղաք/գյուղ
Պատժի տեսակը

1. Ե՞րբ եք առաջին անգամ առնչվել Պրոբացիա ծառայության հետ.
   1.1. Տուգանք նշանակելուց հետո
   1.2. Վաղաժամկետ ազատվելու փուլում քրեակատարողական հիմնարկում
   1.3. Վաղաժամկետ ազատվելուց հետո
   1.4. Դատարանի պատիժ նշանակելուց հետո
   1.5. Այլ_____

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

2. Ընդհանուր առմամբ ինչպիսի՞ն կգնահատեիք Պրոբացիայի ծառայողների վերաբերմունքը Ձեր նկատմամբ:

3. Ի՞նչ խնդիրներ էք ունեցել Պրոբացիայի ծառայության հետ կապված:

4. Ի՞նչ տեսակ աջակցություն էք ստացել Պրոբացիայի ծառայության կողմից
   - ուղղորդում,
   - խորհրդատվություն,
   - այլ /նշել

5. Ի՞նչ կարիքներ ունեք:

6. Ի՞նչ եք պլանավորում անել Ձեր խնդիրների/կարիքների հետ:

7. Արդյո՞ք հնարավորություն ունեցել եք քննարկել այս հարցերը պրոբացիայի աշխատողի հետ:

8. Եթե այո, ի՞նչ արձագանք եք ստացել, և արդյոք որևէ գործողություն իրականացվել է դրանք լուծելու հետ կապված:

Եթե ոչ, ինչո՞ւ, չեք ցանկացել քննարկել, թե պրոբացիայի աշխատակիցը չի հարցրել, հետաքրքրվել Ձեր կարիքներով և խնդիրներով:

9. Ինչպե՞ս է ընթանում շփումըպրոբացիայի ծառայության հետ /կարող է լինել մի քանի տարբերակ/

   9.1. Միայն ստորագրում եմ, 5 րոպեից պակաս
   9.2. Մի քանի ֆորմալ հարց, բայց ոչ մի աջակցություն
   9.3. Քննարկում, բայց անօգուտ
   9.4. Ուղղորդում այլ ծառայություններ, նշել որ ծառայությունները

   9.5. Գործողությունների պլանի համատեղ կազմում
   9.6. Այլ նշել

10. Եթե կազմվել է գործողությունների պլան,
    - արդյոք այն կազմվել է Ձեր մասնակցությամբ,
    - արդյոք համաձայնեցվել է Ձեզ հետ,
    - Ձեզ տրամադրվե՞լ է դրա պատճենը

Ի՞նչ գործողություններ են նախատեսվել այդ պլանով:

   10.1.1. Եթե կազմվել է գործողությունների պլան, ի՞նչ շարունակություն է այն ստացել

10.1.2. Եթե ուղղորդվել եք այլ ծառայություններ, ի՞նչ շարունակություն է դա ստանցել

Ձեր կարծիքով Ձեզ առաջարկված գործողությունների պլանը կամ այն ծառայությունները, որոնց Ձեզ ուղղորդել են, համապատասխանո՞ւմ են Ձեր կարիքներին և խնդիրներին:

11. Այցելե՞լ է, արդյոք, պրոբացիայի աշխատակիցը Ձեր տուն:

12. Այցելե՞լ է, արդյոք, պրոբացիայի աշխատակիցը Ձեր աշխատանքի վայր:

13. Ձեր կարծիքով, ո՞րոնք են պրոբացիայի նպատակները /կարող է լինել մի քանի տարբերակ/
    - 13.1. վերահսկում
    - 13.2. աջակցություն
    - 13.3. կարիքներին ուղղված համատեղ գործողությունների պլանի կազմում
    - 13.4. ուղղորդում տարբեր սոցիալական եւ այլ աջակցող ծառայություններ
    - 13.5. տուժողի հետ հաշտեցում
    - 13.6. Այլ նշել

14. Վերոնշված գործառույթներից որն է իրականացվել կամ իրականացվում ձեր դեպքում:

15. Ձեզ որևէ մեկը բացատրե՞լ է պրոբացիայի ծառայության գործառույթները:

16. Ի՞նչպիսին է համայնքի վերաբերմունքը Ձեր նկատմամբ /ընտանիք, աշխատատեղ, հարևաններ և այլն/:

17. Փոխվե՞լ է, արդյոք, վերաբերմունքը դատարանի որոշումից հետո:

18. Ի՞նչ դեր ունի պրոբացիան Ձեր եւհամայնքի(ընտանիք, հարևաններ, ընկերներ, աշխատատեղ և այլն)փոխհարաբերությունների կարգավորման գործում:

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

1. Քանի՞ հանրային աշխատանքի ժամ ունի

2. Ինչքա՞նն է արդեն լրացրել

3. Իրականացման վայրը / վայրերը

4. Օրական քանի՞ ժամ եք անցկացնում հանրային աշխատանքի վայրում
5. Ինչպե՞ս եք գտել և տեղավորվել այս հանրային աշխատանքին

6. Բավարարվա՞ծ եք, արդյոք, աշխատանքով և ինչու
   Այո, ինչո՞ւ

   Ոչ, ինչո՞ւ

7. Ինչպիսի՞ն է աշխատանքի վայրի ղեկավարության վերաբերմունքը Ձեր նկատմամբ

   7.1. մյուս աշխատակիցների վերաբերմունքը

8. Ինչպիսի՞ն է պրոբացիայի ծառայողի վերահսկողությունը:

Արդյոք Պրոբացիայի ծառայողը իրականացնում է վերահսկողություն,

- այցելո՞ւմ է հանրային աշխատանքի վայր,
- զրուցո՞ւմ է Ձեր և ղեկավարության հետ,
- ստուգո՞ւմ է թե քանի օր և ժամ եք աշխատել, ինչ պայմաններում եք աշխատում:

9. Ինչպե՞ս կգնահատեք այդ վերահսկողությունը:

10. Ի՞նչ կուզենայիք նշել հանրային աշխատանքի վերաբերյալ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

10. Հանրային աշխատանքների վայր
11. Ում հետ եք խոսել

---

12. Ի՞նչ գործ է անում պրոբացիայի շահառուն:

13. Ինչպե՞ս է շահառուն հայտնվել այս աշխատանքի վայրում:

14. Ճանաչո՞ւմ էիք, արդյո,ք, շահառուին մինչ հանրային աշխատանքներին ներկայանալը:

15. Արդյո՞ք բավարարված եք շահառուի աշխատանքից:

16Ինչպի՞սի կապ կա Պրոբացիայի ծառայության հետ, ի՞նչ հարցերով:

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻՆ
ԱՋԳԱՅԻՆ ՑԱՆՑ